ԿԱՆԹԵՂ

ՄՈՆԹՐԷԱԼԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL

ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 11 Նոյեմբեր 2018

Թ. Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին / ԹԻՒ 84

Dimanche 11* novembre *2018

9ème Dimanche après la Sainte Croix / N0. 84

Today's Bible Readings

Ephesians 5:15-33 / Luke 8:49-57 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

Éphésiens 5:15-33 | Luc 8:49-57 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ / Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN/ Prêtre Paroissial

Office Matines à 9 :30 - Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին
La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ ժամը 10:30-ին
Office de Requieme à Midi - Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին
Յաւարտ Ս. Պատարագի «Տիկնանց Յանձնախումբ» եւ Օժանդակ Տիկիններու ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan, Dn. Kami Sarimanukoglu, Dn. Zaven Der Sahagian Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Les lectures de dimanche

The Sunday Readings

ԵՓԵՍԱՑԻՆԵՐ 5.15-33

15Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցութեամբ. ո՛չ թէ
անխոհեմներու պէս, 16հապա՝ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը,
որովհետեւ օրերը չար են: 17Ուստի անմիտ մի՛ ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ի՛նչ
է Տէրոջ կամքը: 18Մի՛ արբենաք գինիով՝ որուն մէջ անառակութիւն կայ,
հապա Հոգիո՛վ լեցուեցէք: 19Սաղմոսներով, օրհներգերով եւ հոգեւոր
երգերով դուք ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէ՛ք ու սաղմո՛ս ըսէք Տէրոջ ձեր
սիրտերուն մէջ: 20Ամէն ատեն՝ ամէն բանի համար շնորհակա՛լ եղէք
Աստուծմէ եւ Հօրմէն, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով: 21Իրարու
հպատակեցէ՛ք Աստուծոյ վախով:

22Կինե՛ր, հպատակեցէ՛ք ձեր ամուսիններուն՝ որպէս թէ Տէրոջ. 23որովհետեւ
ամուսինը կնոջ գլուխն է, ինչպէս Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, եւ ինքն է
մարմինին Փրկիչը: 24Հետեւաբար, ինչպէս եկեղեցին հպատակ է Քրիստոսի,
նոյնպէս ալ կիները թող ըլլան իրենց ամուսիններուն՝ ամէն բանի մէջ:

25Ամուսիննե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Քրիստոս ալ սիրեց եկեղեցին եւ
ընծայեց ինքզինք անոր համար, 26որպէսզի սրբացնէ զայն ու մաքրէ ջուրի
լուացումով՝ խօսքին միջոցով. 27որպէսզի ներկայացնէ զայն իրեն՝ իբր
փառաւոր եկեղեցի մը, որ չունենայ բիծ, կամ կնճիռ, կամ նման որեւէ բան,
հապա ըլլայ սուրբ եւ անարատ: 28Նոյնպէս ալ ամուսինները պարտաւոր են
սիրել իրենց կիները՝ իրենց մարմիններուն պէս. ա՛ն որ կը սիրէ իր կինը՝ կը
սիրէ ինքզինք: 29Արդարեւ ո՛չ մէկը երբեք ատած է իր մարմինը, հապա կը
կերակրէ զայն ու կը փայփայէ, ինչպէս Տէրն ալ՝ եկեղեցին. 30քանի որ մենք
անոր մարմինին անդամներն ենք, անոր միսէն եւ անոր ոսկորներէն: 31“Ատոր
համար մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը
պիտի ըլլան մէ՛կ մարմին”: 32Ասիկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ
Քրիստոսի եւ եկեղեցիին մասին: 33Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը թող սիրէ իր
կինը այնպէս՝ ինչպէս ինքզինք, ու կինը թող ակնածի իր ամուսինէն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.49-57

49Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ.
«Աղջիկդ մեռաւ, ա՛լ մի՛ անհանգստացներ վարդապետը»։ 50Բայց երբ Յիսուս
լսեց ասիկա՝ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, միա՛յն հաւատա, ու պիտի ապրի»։
51Երբ տունը մտաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի,
Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր։ 52Բոլորն ալ կու լային եւ կը
հեծեծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի՛ լաք. ան մեռած չէ, հապա կը
քնանայ»։ 53Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի գիտէին թէ մեռաւ։ 54Իսկ ինք
բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջի՛կ, ոտքի՛
ելիր»։ 55Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմի՛ջապէս կանգնեցաւ։ Յիսուս
հրամայեց՝ որ անոր ուտելիք տան։ 56Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք
պատուիրեց անոնց՝ որ պատահածը ո՛չ մէկուն ըսեն։

Ephesians 5.15-33

15 See then that ye walk circumspectly, not as fools, but as wise, 16 Redeeming the
time, because the days are evil. 17 Wherefore be ye not unwise, but understanding
what the will of the Lord is.
18 And be not drunk with wine, wherein is excess; but be filled with the Spirit;
19 Speaking to yourselves in psalms and hymns and spiritual songs, singing and
making melody in your heart to the Lord; 20 Giving thanks always for all things unto
God and the Father in the name of our Lord Jesus Christ; 21 Submitting yourselves
one to another in the fear of God. 22 Wives, submit yourselves unto your own
husbands, as unto the Lord. 23 For the husband is the head of the wife, even as
Christ is the head of the church: and he is the saviour of the body. 24 Therefore as
the church is subject unto Christ, so let the wives be to their own husbands in
everything. 25 Husbands, love your wives, even as Christ also loved the church, and
gave himself for it; 26 That he might sanctify and cleanse it with the washing of
water by the word, 27 That he might present it to himself a glorious church, not
having spot, or wrinkle, or any such thing; but that it should be holy and without
blemish. 28 So ought men to love their wives as their own bodies. He that loveth his
wife loveth himself. 29 For no man ever yet hated his own flesh; but nourished and
cherished it, even as the Lord the church: 30 For we are members of his body, of his
flesh, and of his bones. 31 For this cause shall a man leave his father and mother,
and shall be joined unto his wife, and they two shall be one flesh. 32 This is a great
mystery: but I speak concerning Christ and the church. 33 Nevertheless let every one

of you in particular so love his wife even as himself; and the wife see that she reverences her husband.

Luke 8.49-57

49 While he yet spake, there comed one from the ruler of the synagogue's house,
saying to him, Thy daughter is dead; trouble not the Master. 50 But when Jesus
heard it, he answered him, saying, Fear not: believe only, and she shall be made
whole. 51 And when he came into the house, he suffered no man to go in, save
Peter, and James, and John, and the father and the mother of the maiden. 52 And
all wept, and bewailed her: but he said, Weep not; she is not dead, but sleeped.
53 And they laughed him to scorn, knowing that she was dead. 54 And he put them
all out, and took her by the hand, and called, saying, Maid, arise. 55 And her spirit
came again, and she arose straightway: and he commanded to give her meat.
56 And her parents were astonished: but he charged them that they should tell no
man what was done.

Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն: «Մի վախնար, այլ միայն հաւատայ » (Ղուկասու 8 : 50)

Յարգելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,

Օրուան աստուածաշնչեան ընթերցումը Հայրոսի աղջկան Յարութեան եւ տեռատես կնոջ բժշկութեան մասին է: Հայրոսը ժողովրդապետ էր, որ եկաւ Քրիստոսի ոտքերուն իյնալով աղաչեց, որ գայ իր տունը եւ բժշկէ իր մինուճար աղջիկը, որ մահամերձ է: Իսկ երթալու ընթացքին տասներկու տարի արիւնահոսութեամբ տառապող տեռատես կինը, որ «հնարաւոր չէր եղած անոր որեւէ մէկէն բժշկուիլ», կը մօտենայ Յիսուսին, կը դպչի Անոր հագուստին քղանցքին եւ կը բժշկուի: Քրիստոս կը զգայ, որ Իրմէ զօրութիւն դուրս եկաւ, յատուկ դիտաւորութեամբ կը հարցնէ, թէ ո՞վ Իրեն դպաւ: Կինը, տեսնելով, որ իր արարքը գաղտնի չմնաց, բոլորին առջեւ բարձրաձայն կը պատմէ, թէ ինչպէս դպչելով Տիրոջը բժշկուեցաւ: Քրիստոս չյանդիմանեց անոր, այլ գօտեպնդեց. «Քաջալերուի՛ր, դո՛ւստր, քո հաւատքդ փրկեց քեզ, գնայ՛ խաղաղութեամբ» (Ղուկաս 8:48): Այդ ընթացքին ժողովրդապետի տունէն կու գան եւ կը տեղեկացնեն Հայրոսին, թէ աղջիկը մահացաւ, կարելի է այլեւս պէտք չէ անհանգստացնել Յիսուսին: Տէրը կը լսէ այդ եւ կ'ըսէ. «Մի՛ վախնար, այլ միայն հաւատայ՛, եւ ան կ'ապրի» (Ղուկաս 8:50): Երթալով Հայրոսի տունը՝ միայն ծնողներուն թոյլ կու տայ սենեակին մէջ մնալ, կը բռնէ աղջկան ձեռքէն եւ կ'ըսէ, որ աղջիկը կանգնի: Եւ ան յարութիւն կ'առնէ: Յիսուս կը պատուիրէ, որ անոր հաց տան: Աւետարանական այս հատուածը կը զօրացնէ մեզ մեր հաւատքին մէջ եւ միաժամանակ հաղորդակից կը դարձնէ

աստուածային ճշմարտութիւններուն: Այս Տիրոջ կատարած հերթական բժշկութիւններէն էր, հերթական քարոզը Ամենակարող Աստուծոյ նկատմամբ ունեցած մարդկային հաւատքի մասին: Բազմաթիւ են Տիրոջ բժշկութիւններն ու հրաշագործութիւնները, որոնց մասին կը պատմեն աւետարանիչները, իւրաքանչիւրը իր արժանի տեղն ունի Աւետարանին մէջ յիշատակելու եւ կրթելու մեզ՝ ապահովելով մեր հոգեւոր յառաջընթացը: Այս երկու պատմութիւնները Աստուածային սիրոյ արտայայտութիւնն են մարդու կեանքին մէջ: Քրիստոս, մարդոց հաւատքը տեսնելով, կը բժշկէր անոնց: Նոր կտակարանին մէջ հիւանդներու պարագային կը տեսնենք, որ կամ մարդիկ իրենք իրենց համար կը խնդրեն Յիսուսէն, կամ անոնց բարեկամներն ու հարազատները անոնց կը բերեն Քրիստոսին մօտ: Ցանկացուած խնդրի ու խնդրանքի համար Աստուած միշտ ականջալուր է մեզի, գտնելով լուծում ամէն հարցի եւ ամէն ցաւի ու տառապանքի բժշկութիւն Տիրոջ ոտքերուն առջեւ: Հիւանդ կնոջ պարագային Քրիստոս ճամբուն վրայ իմացաւ եւ նոյն միջոցին կինը բժշկուեցաւ եւ ան ուղղակի փափաք յայտնեց, որ մարդիկ իմանան կնոջ հաւատքին մասին: Այդ հիւանդութիւնը անոր համար տարիներ շարունակ անէծք դարձած էր եւ խոչընդոտ հանդիսացած անոր տաճար մտնելուն, որուն պատճառով ան շարունակ զրկուած կը մնար Աստուծոյ օրհնութենէն: Վերջապէս ան կը բժշկուի եւ կը փառաբանէ Աստուծոյ: Տէրը կը գովէ անոր հաւատքը, որ այդ բժշկութեան եւ մեծագոյն օրհնութեան առիթ կը դառնայ:

Իսկ Քրիստոս տեսնելով Հայրոսի տխրութիւնը՝ կը հանգստացնէ զինք եւ Ան կ'երթայ եւ յարութիւն կու տայ անոր աղջկան՝ ցոյց տալով, որ Աստուծոյ կողմէ ոչ ոք անտեսուած չէ, Աստուած կը լսէ եւ մինչեւ մեր խնդրելը գիտէ, թէ մեզի ինչն է անհրաժեշտ: Միայն հարկաւոր է հաւատալ Արարիչին, որ Ան կրնայ մեզ բժշկել, կերակրել, ապրեցնել եւ վերջապէս փրկել մեզի՝ անոր դիմաց ակնկալելով միայն հաւատք: Յիսուս Քրիստոսի փրկարար զօրութիւնը՝ նախապէս մարդիկ լսելով ու տեսնելով է, որ կը սպասէին Անոր: Այս աւետարանական պատումը կը ցուցանշէ Աստուծոյ նուիրումը մարդուն, որ Աստուած չզլացաւ երթալ դէպի մարդը՝ բժշկելու, յարութիւն պարգեւելու եւ փրկելու զայն: Մեր հաւատքի կեանքին մէջ եւս կը պատահի այնպիսի անհաւատալի երեւոյթ, որոնցմէ մէկը այն ծառան է, որ կը յայտնէ Հայրոսին աղջկան մահուան բօթը: Կրնայ ըլլալ նմանատիպ անհաւատարմութեան դրսեւորումներ մեր հաւատքի ճանապարհին վրայ, որոնք կրնան մեզ տկարացնել, ձգել յուսահատութեան մէջ, համոզել մեզ, որ այլեւս յոյս չկայ: Սակայն հարկ է, որ մենք շարունակենք չտարակուսիլ մեր հաւատքին վրայ, Աստուծոյ ապաւինելով, չվախնանք կեանքի փորձութիւններէն ու դառնութիւններէն, դժուարութիւններէն, այլ միայն հաւատանք եւ ապրինք: Անոնք որոնք չեն հաւատար Աստուծոյ, զրկուած են Աստուծոյ

օրհնութիւններէն ու շնորհքներէն, իսկ մեզի համար մեր հաւատքը կենսապարգեւ զօրութիւն մըն է, որուն շնորհիւ մենք կ'ապրինք Աստուծոյ օրհնութեան ու հոգածութեան տակ: Երբ Պետրոս առաքեալ խնդրեց Յիսուսէն, որ օգնէ իրեն, որպէսզի ինքն ալ կարողանայ ծովի վրայով քալել, Քրիստոս «ըսաւ՝ եկուր՛: Եւ Պետրոսը նաւակէն իջնելով՝ քալեց ջուրի վրայով ու եկաւ Յիսուսին մօտ: Սակայն տեսնելով ուժգին քամին՝ վախցաւ: Եւ երբ սկսաւ սուզուիլ, աղաղակեց ու ըսաւ. «Տէ՛ր, փրկէ՛ ինձ»: Եւ իսկոյն Յիսուս երկարեց իր ձեռքը, բռնեց անոր ու ըսաւ. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցար» (Մատթէոս 14:29-31): Այդ ալ իր հերթին վկայութիւն մըն է այն մասին, որ մարդոց կեանքին մէջ պատահող փոթորիկները կրնան սարսափեցնել զանոնք եւ այդ պատճառով անոնք կրնան երկմտիլ: «Մի՛ վախնսար, այլ միայն հաւատայ՛», – կ'ըսէ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս: Այդ մշտապէս պէտք է ըլլայ մեր միտքին ու գիտակցութեան մէջ, որպէսզի Աստուած Իր բարիքներուն մեզի մասնակից դարձնէ ու արժանացնէ Իր օրհնութիւններուն ու փրկագործութեան: Մեզ՝ Քրիստոնեաներս, կը միաւորէ հաւատքն առ Աստուած: Սակայն ուշադրութիւն դարձնենք մասնաւորաբար այն կէտին, որ մեր հաւատքը ներշնչանք չէ: Հաւատքը մեր կեանքի հիմնասիւնն է: Հաւատքն առ Աստուած այն է, որ մեր Տէրը կը սպասէ մեզմէ, որովհետեւ Ան երբեք չի հարկադրեր մեզի հաւատքն ու սէրը: Ճշմարիտ Աստուծոյ նկատմամբ հաւատքը մեզ կ'ապրեցնէ այս կեանքին մէջ եւ յաւիտենական կեանքի ու հոգիի փրկութեան յոյս կը պարգեւէ:

Սիրելինե՛ր, եկէք ունայն ու սին բաներու ետեւէ չիյնանք, այլ հաւատանք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին, որպէսզի չվախնանք այս աշխարհին մէջ կատարուող զանազան իրողութիւններէն ու սատանայական երեւոյթներէն: Ոչ թէ աշխարհիկ բոլոր միջոցներուն, դեղ ու դարմաններուն դիմելէն յետոյ յիշենք Աստուծոյ, այլ մեր ամենաառաջին յոյսը թող ըլլայ Ան, քանի որ մենք կը հաւատանք Անոր: Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանսն. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած իմ, հզօր եւ գթած,
դուն՝ որ քու անսահման սիրովդ զիս ոչինչէն ստեղծեցիր քու անիմանալի պատկերովդ, եւ բարի պարգեւներովդ կը հոգաս իմ բոլոր պէտքերս:

Ամբողջ սրտով շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի՝ ամէն բանի համար, որ տուիր ինծի ծննդեանս օրէն մինչեւ այսօր: Բայց որովհետեւ մարդկային յանցանքներուն բերումով՝ ապականած, տկար եւ սխալական բնութիւն մը ունիմ, կ'աղաչեմ, ինծի քու շնորհքդ եւ իմաստութիւնդ տուր, եւ քու զօրութիւնդ օգնական դարձուր ինծի, որպէսզի կարենամ միշտ քու պատուիրաններուդ փրկարար շաւիղներուն մէջ քալել, եւ համակերպիմ քու կամքիդ եւ Օրէնքիդ, որպէսզի զերծ մնամ հոգիի եւ մարմնի բոլոր վտանգներէն ու փորձանքներէն, հեռու մնամ բոլոր անմիտ սխալներէն, յամառութեան մոլութենէն, անկարգ ցանկութիւններէն եւ սեփական քմահաճոյքներէ:

(շարունակելի)

PRIÈRE DES JEUNES GENS

O, mon Dieu, puissant et miséricordieux, tu m'as créée à partir de rien avec ton amour infini et ton image incompréhensible. Tu exauces mes besoins avec tes dons, et de tout mon cœur, je te rends gloire pour tout ce que tu m’as donné depuis ma naissance jusqu’aujourd’hui. Mais puisque j’ai été corrompu à cause de mes péchés et à cela, s’ajoute ma faible nature, je t’en supplie, donnes-moi ta grâce, ta sagesse et ta puissance et sois mon secours pour que je puisse toujours marcher dans les chemins de tes commandements salvifiques et me conformer à ta volonté et à ta loi afin que je sois exempt de tous les dangers les périls Eloignes-moi aussi de toutes les fautes des insensés, du vice persistant, du désir immodéré et de mes propres caprices.

(à suivre)

Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

Feast de l'église pour la Semaine Prochaine

Նոյեմբեր – Novembre

12, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին, Մինասայ Եգիպտացւոյն եւ միւս Մելիտոսի եպիսկոպոսին:
Զինադադար Առաջին Համաշխարհային Պատերազմի 1918-ին:

Lundi 12 – Fête du Daint patriarche Mélidos d'Antioche, de Minas l'Egyptien, de l'évêque Mélidos.
Armistice de 1918 de la première guerre mondiale.

13, Երեքշաբթի - Տօն Սրբոցն Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային:

Mardi 13 - Fête du Saint martyr Démétrios et du prêtre Basilisgos.

14, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 14 - Jeûne.

15 Հինգշաբթի - Տօն Սրբոցն Գուրիասայ, Սամունասայ, Աբիբայ սարկաւագին, Ռոմանոսի միայնակեցւոյն, մանկանն Խոստովանողի եւ Հիւսիքոսի զինաւորին:

Jeudi 15 - Fête des Saints Gourias, Samounas, du diacre Abib, du moine Romanos, de l'enfant confesseur et du soldat Hesciques.

16, Ուրբաթ - Պահք:

Vendredi 16 - Jeûne.

17, Շաբաթ – Տօն Սրբոց առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի:

Samedi 17 – Fête des Saints Apôtres André et Philippe.

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018

Հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի եւ Ողջ Երկնային Զօրքի Յիշատակութեան Օր

Հայ եկեղեցւոյ Հրեշտակաբանութեան համաձայն՝ հրեշտակները անմարմին գոյացութիւններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ: Ըստ եկեղեցւոյ սուրբ հայրերուն՝ հրեշտակները, իբրեւ լուսեղէն էակներ, ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսի հետ միասին: Աստուծոյ հրահանգով անոնք կոչուած են սպասաւորելու մարդ արարածին: Հետեւաբար անոնք սպասաւոր հոգիներ են, որոնք երկնաբնակ ըլլալով հանդերձ, իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ երկրաւոր կեանքի ընթացքին, կը գործեն ժամանակի եւ տարածքի մէջ ապրող մարդու հետ, մարդու համար: Հրեշտակներուն կ'անուանեն նաեւ Աստուծոյ պատգամաւորներ, որոնք կ' իրականացեն Տիրոջ կամքը: Ս. Գիրքը կը վկայէ, որ անոնք բազմաքանակ են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի՝ հրեշտակները ունին ինը դասակարգ՝ Աթոռներ, Քերովբէներ, Սերովբէներ, Տէրութիւններ, Զօրութիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ:

Գաբրիել անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Հայր», Բարձրեալի անմիջական պաշտօնեան է, որուն վերապահուած է Տիրոջ վերին խորհուրդները աւետարանելու շնորհքը: Այս հրեշտակապետը, որ ուղարկուած էր Տիրոջ կողմէն, Ս. Կոյս Մարիամին բարի լուրը հաղորդեց, իսկ Զաքարիային՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան աւետիսը:

Միքայէլ անունը, որ կը նշանակէ «Ո՞վ է Աստուծոյ նման», Երկնաւոր Արքայի փառքին եւ անոր ժողովուրդին պաշտպանութեան համար մարտնչողն է, որուն տրուած է կառավարելու եւ թագաւորելու շնորհքը: Միքայէլ հրեշտակապետին անունը չորս անգամ վկայակոչուած է Ս. Գիրքին մէջ: (Դան. Ժ 13, ԺԲ 1, Յուդ. Ա 9, Յայտ. ԺԲ 7):

Holidays

Saturday November 10, 2018

Commemoration of Archangels Gabriel and Michael and the Entire Heavenly Class

According to the Angelology of the Armenian Church the angels are unfleshly, spiritual, independent, always moving, asexual, immortal creatures and God's servants. According to Church Fathers, the angels, as luminous creatures, have been created the first day of Creation, together with the light. By the God's order they are servants, they have been created to serve the human being. Therefore, they are servants who despite their being dyophysite, participate in the earthly life, act together with the human being living in time and space, they act for the human being. The angels are called the messengers and agents of God, who realize God's will. According to Dionysius of Areopagus (Areopagite), there are nine orders of angels – Angels, Archangels, Virtues, Powers, Principalities, Dominations, Throne, Cherubim and Seraphim.

Archangel Gabriel, whose name means "God's man", is God's direct servant, who is granted the grace to evangelize the Lord's mysteries. It was Archangel Gabriel, who was sent by the Lord to bring the good news to the Virgin about the birth of the Savior, and to Zechariah – to bring the good news about the birth of John the Baptist.

Archangel Michael, whose name means "Who is like God?", is the advocate for the Heavenly King's glory and His people's protection, who is granted the virtue to govern and rule. The name of Archangel Michael is mentioned in the Holy Scriptures for four times (The Book of Daniel,10:13, 12:1, The Letter from Jude 1:9, The Revelation to John 11:7).

Monday November 11, 2018

Commemoration of Sts. Pontiff Melitos of Antioch, Minas of Egypt and the other Bishop Melitos, Priest Bouras and Deacon Shinou

The Pontiff Melitos (Meletius, Bishop of Antioch) was born in the town Melitene of Pokr Hayk (Armenia Minor). In 358 AD he becomes the Bishop of the town Sebastia of Pokr Hayk (Armenia Minor) and in 360 AD he is elected the spiritual leader of the Antioch.

Being righteous, gentle, honest and sincere in worshiping the God, Bishop Melitos avoided the theological disputes typical to that time period. And the people expected that he would manage to establish peace in Antioch split and disunited because of religious disputes. And indeed, he succeeds to satisfy the population of that turbulent town Staying aside from discussing theological controversial issues, he delivers sermons, tries to realize some gradual reformations.
However, during the Council of Antioch, organized by the Arian King Kostandianos and the purpose of which was to reveal the doctrinal convictions of Melitos, the fact of his being orthodox is revealed. By the instigation of the Arians Melitos is exiled for three times.
Bishop Melitos is the author of the theological work "Exposition of faith". The saint has participated in the Second Ecumenical Council of Constantinople and has presided the Council. Unfortunately, he has passed away before the conclusion of the Council, in 381 AD.

Minas (Menas the Egyptian) was an officer from Egypt, who served in the Roman Army. Seeing the dirty tricks, injustice and malice existing in the surrounding world, Minas decides to devote himself to ascetic life, and goes to the mountains in Phrygia.

During one of the heathen feasts he comes to the people and condemns the heathen idols and preaches the Christian faith. For that deed Minas is subjected to torments and is beheaded in 304 AD. The place of martyrdom of Minas is considered to be a sacred place and his image – always depicted sitting on the camel, becomes very popular especially in the Middle Ages.
Melitos (Meletius, Bishop of Persia) was a Persian Christian officer serving in the Persian Army. Giving up military service he devotes himself to spiritual life and is ordained as the Bishop of the town Bitrazan. Despite the repeated persecutions by the heathens he continues to preach the Gospel and reaches even to the capital city of Persia – Tizbon. Refusing to worship the sun Melitos is martyred in Tizbon during the reign of the Persian King Shapouh (331-378). Two of his disciples – Priest Bouras (Buras) and Deacon Shinou (Sennen) are martyred together with Melitos.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

Service pour le Repos de l'Âme

Service for the Repose of Soul

ԿԻՐԱԿԻ, 11 Նոյեմբեր 2018

**Պրն. Յակոբ Արթինեանի, զաւակներուն եւ թոռներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր `**

ԺՈՒՍԹԻՆ ԱՐԹԻՆԵԱՆԻ
(JUSTINE ARTINIAN)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով

**Տիկ. Պերճուհի Սօզքէսի,
Հենիքա Սօզքէսի,
Սրբուհի Սօզքէսի,
Թագուոր Ալթանի,
Գարինա Ալթանի,
Ալին Քըրըմլիի,
Եազմին Քըրըմլիի,**

**Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր`**

ԳԷՈՐԳ ՍՕԶՔԷՍԻ
(KEVORK SOZKES)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով

Տ. եւ Տիկ. Ժան եւ Լիլիան Թիւրապեանի եւ ընտանիքին,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ԱՆԱՀԻՏ ԹԻՒՐԱՊԵԱՆԻ
(ANAHID TURABIAN)

Մահուան 40-ին առիթով
Ինչպէս նաեւ՝
Իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ԱՐՇԱՄ ԹԻՒՐԱՊԵԱՆԻ
(ARSHAM TURABIAN)

Իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ԿԱՐՊԻՍ ՅԱԿՈԲԵԱՆԻ
(GARBIS HAGOPIAN)

եւ

Իրենց սիրեցեալ եղբօր եւ մօրեղբօր՝

ՕՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆԻ
(OHANNES HAGOPIAN)

Հոգիներուն ի հանգիստ

Տիկ. Ռիդա Յակոբեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իր սիրեցեալ ամուսնոյն՝

ԿԱՐՊԻՍ ՅԱԿՈԲԵԱՆԻ
(GARBIS HAGOPIAN)

եւ

Իր սիրեցեալ զաւկին՝

ՕՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆԻ
(OHANNES HAGOPIAN)

Հոգիներուն ի հանգիստ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Don à l'Église



Donation for the Church

Saint Gregory the Illuminator Armenian Cathedralof Montreal
Donations of November 2018
have been received with great appreciation

CHURCH:

"GOMIDAS" CHOIR 60th ANNIVERSARY:

Dr. Vilma Derbekyan $500, Mr. Vahe Keresteciyan $250, Mr. Agop Sirinyan $150, Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen $100

RENOVATION FUND:

Dr. Vilma Derbekyan $500

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ARUSYAK GURNAGUL:

Mr. & Mrs. Norayr & Paylin Gurnagul, Mrs. Surihi Migirditsian $300, Mr. Sarkis Gurnagul & Family, Mr. & Mrs. Gilbert & Reena Migirditsian $200, Mr. & Mrs. Nazaret Sahakian, Mr. & Mrs. Seta & Arsen Bosnakyan, Mr. Toros Kilavuz, Mr. & Mrs. Migirdic Sahakian, Mr. Ovagim Gurnagul $100, Mrs. Karmen Gurnagul $75, Mr. Kaspar Kasparian, Mr. & Mrs. Michel & Anahid Kutlu, Mrs. Verjin Kurkcuoglu, Mr. Harry Pinejian, Mr. & Mrs. Murat & Nadya Armutlu, Mr. & Mrs. Anoush & Hagop Kazan, Mr. & Mrs. Berc Kirmiziyan, Mr. & Mrs. Jack Sahakian & Family, Mr. & Mrs. Migirditch Migirditsian & Family, Mrs. Filor Kalktik $50, Mrs. Loucine Kasbarian $40, Mr. & Mrs. Minas & Verjin Asaduryan, Mrs. Hermine Chadakhtzian, Mr. & Mrs. Vahakn Arapyan, Mr. & Mrs. Rojer & Niver Gudsuz $30, Mr.& Mrs. Migirdic Didonyan $25

THE LATE ARMINE KEUCHGUERIAN:
Mr. & Mrs. Vahan Sekeryan $30

HOKEHANKISD:
THE LATE VARTAN MANIKIAN:
Mrs. Margo Manikian $100, Mr. & Mrs. Hovsep Doramajian,
Mr. & Mrs. Pierre Mazloumian $50, Mr. Viken Manikian $40

HOKEHANKISD IN MEMORY OF
THE LATE BAZAAR AUXILIARY LADIES:
THE LATE SOPHIE BELGIN:
Mrs. Karmen Ketli $50

ՍԱՅՐ ՏԱՃԱՐ

Website:
www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ Կայքէջը - Website www.saintgregory.ca,

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca,
where you will read the latest church news and events, meanwhile you can also make your online church donations and benefiting from other possibilities of our Website.

Thank you for support!

Parish Council

Ծխական Խորհուրդ

Յառաջիկայ Ձեռնարկներ

«Կոմիտաս» Դպրաց Դասի Հիմնադրութեան 60-Ամեակի Տօնակատարութիւն –
Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը 8-ին «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

UPCOMING EVENTS

"Gomidas" Choir the 60th Anniversary Celebration –
Saturday, November 10, 2018 at 8:00 pm
in the Church "Marie Manoogian" hall.

Children's Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018

Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018

Ուշադրութիւն

Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմէական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծխական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council

Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ

2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Զեռնարկ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60– րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ

Նախաձեռնութեամբ՝
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Լավալի Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Թէքէեան Մշակութային Միութեան

In collaboration with
St. Gregory the Illuminator Armenian Cathedral
Holy Cross Armenian Church
Tekeyan Cultural Association

NEW YEAR'S EVE EXTRAVAGANZA 2019

Featuring Nerses Adourian
& 5 member band
DJ Hovsep

December 31, 2018
8:00 pm at Centre Arménie
1025 Boulevard Élisabeth, Laval, QC H7W 3J7

Eight course appetizers and full course meal
Entrance gifts
Champagne toast and party favors
Kids entertainment and Santa

Adults - $95 (after December 1 $110)
Children – (age 7-14) $45
Children ages 6 and under – free

For reservations, please contact:
St Gregory the Illuminator (514) 279 3066
Holy Cross Church (450) 687 5355
Tekeyan Cultural Association (514) 747 6680
Centre Arménie (438) 826 2364

GOMIDAS" CHOIR THE 60TH ANNIVERSARY CELEBRATION

UNDER THE AUSPICES

HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN

With Participation: Famous Singer

MARTEN YORGANTZ
& DJ SAKO

- FUN /SINGING /DANCING
- MUSIC

SATURDAY, NOVEMBER 10, 2018
AT 8:00 PM
IN THE CHURCH "MARIE MANOOGIAN" HALL

SUPPER & APPETIZERS

BY "LADIES COMMITTEE"

FOR RESERVATION PLEASE CALL:

- *MARAL BOGHOSSIAN* (514) 279-3066
- *ARA GERIKYAN* (450) 682-5565

OR (514) 947-4524 AFTER 5 PM

DONATION $50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ

Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Children's Choir

Պատանեկան Երգչախումբի փորձերը կը վերսկսին Կիրակի, 14 Հոկտեմբեր 2018-ին, կէսօրէ ետք, ժամը 1-ին:

Les pratiques de la chorale des Jeunes recommencerons Le dimanche, 14 octobre 2018 à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-14 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
- Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Զուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279–3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան

In a pleasant and friendly atmosphere, the children will learn:

- ***Psalms & songs***
- ***Armenian language skills***
- ***Interesting stories & entertainments***
- ***Fun & fascinating consecutive Fieldtrips***

Sunday School Every Sunday at 11:00 am

For more information and registration call to the Church office
(514) 279-3066
Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

Տ. ԴԱՒԻԹ ՔԱՀՆ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

BIBLE STUDY & INTERESTING DISCUSSIONS

BY FR. DAVID MARGARYAN

Տեղի պիտի ունենայ ամէն Հինգշաբթի երեկոյեան՝ Ժամը 7-էն սկսեալ Եկեղեցւոյ մէջ:

Every Thursday Starting at 7:00 pm in the Church.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝ ներկայացուցած Աստուածաշնչական նիւթերուն:

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

We invite all our beloved faithful to be present to the bible sessions with spectacular biblical subjects that will be presented by Fr. David Margaryan.

Coffee and tea will be served during the sessions.

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Cordially we expect everyone's presence.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ծխական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ծխական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝
Ծխական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ